# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆՖԵԴԵՐԱՑԻԱ

## Ն Ա Խ Ա Գ Ա Հ

0010, Երևան, Վ. Սարգսյան փող.26/3, հեռ.՝ (0+10) 54 52 37; ֆաքս՝(0+10) 52 31 08


*№ 05-01/11 02.08.2012թ.*
*Ձեր 04.07. 2012թ. N ՍՍ / ԹԱ- 3- 1/4813-12*

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի
նախարար պարոն Ա. Ասատրյանին

Հարգելի պարոն Ասատրյան,

«Հայաստանի Հանրապետության զբաղվածության 2013-2018թթ. ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի վերաբերյալ առաջարկում ենք՝

1. Նախագծի ողջ տեքստում «ՀԱՀԿ» հապավումը փոխարինել «ՀԱՄԿ» հապավումով.
2. Նախագծի 55-րդ մասից հանել «որն ավելի շատ ծևական բնույթ ուներ, հիմնականում ճանաչողական, խիստ գաղափարականացված էր և քիչ աղերսներ ուներ աշխատաշուկայի հետ» բառերը, քանի որ հիմնավորում չունի.
3. Նախագծի 58-րդ մասի 2-րդ պարբերությունը լրացնել նոր նախադասությամբ հետևյալ խմբագրությամբ՝ «Սակայն հանրապետությունում նվազագույն աշխատավարձի սահմանման մեխանիզմներ գոյություն չունեն»:
4. Նախագծի 58-րդ մասի 3-րդ պարբերության «անհրաժեշտ է» բառից հետո «համապատասխանեցնել» բառը փոխարինել «ընդունել համապատասխան» բառերով.
5. Նախագծի 93-րդ մասի 2-րդ կետում «ապահովումը» բառը փոխարինել «բարձրացումը» բառով.
6. Նախագծի 94-րդ մասի 9-րդ կետի «ե» ենթակետի «գործնականում ծեռքբերված և համակողմանիորեն գնահատված իրավիճակային հնարավորությունների» բառերը փոխարինել «սահմանված ժամանակացույցի» բառերով:

Հարգանքով՝ Է. Թումասյան

*Կատարող՝ Սոցիալ-տնտեսագիտական և*
*աշխատանքի պաշտպանության բաժին,*
*հեռ. 52-05-91*